ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Սահակյանի, Էդմոն Մարուքյանի, Մարգարիտ Եսայանի և Արման Սահակյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-729-26.02.2015-ՊԻ-010/0) վերաբերյալ։

Ներկայացված օրենքի նախագծի համաձայն քննիչը պարտավոր է տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկել քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը և միաժամանակ պարզաբանել քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման բողոքարկման ընթացակարգը։ Մինչդեռ քրեական դատա-

վարության մասնակիցների, մասնավորապես, մեղադրյալի իրավունքների լիարժեք պաշտպանության տեսանկյունից արդարացված կլինի նշված սուբյեկտների շարքում նախատեսել նաև մեղադրյալին՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ, համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, քրեական գործի վարույթը կասեցվում է նաև այն դեպքերում, երբ մեղադրյալը ծանր հիվանդ է կամ գտնվում է Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս, որոնց պատճառով չի կարող մասնակցել քրեական գործով վարույթին, եթե առանց նրա մասնակցության քրեական գործով հետագա վարույթն անհնար է, և այն դեպքում, երբ գործում է անհաղթահարելի ուժ, որը ժամանակավորապես խոչընդոտում է քրեական գործով հետագա վարույթը: Ասվածից հետևում է, որ թվարկված հիմքերով քրեական գործի վարույթը կասեցնելու մասին որոշումը տվյալ դեպքում փաստացի հնարավոր է դառնում հանձնել նաև մեղադրյալին: Քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը մեղադրյալին հանձնելու պարտականության ամրագրումը լրացուցիչ երաշխիք կստեղծի մեղադրյալի պաշտպանության իրավունքի, հատկապես՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 65-րդ և 290-րդ հոդվածներով ամրագրված՝ քրեական հետապնդման մարմնի որոշումները և գործողությունները բողոքարկելու իրավունքի արդյունավետ իրականացման համար: Ավելին՝ նմանատիպ կարգավորում առկա է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում, որի 197-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է քննիչի՝ քրեական հետապնդումը կասեցնելու մասին հսկող դատախազի որոշումն ստանալուց հետո դրա պատճենը վարույթի մասնավոր մասնակիցներին (այդ թվում՝ նաև մեղադրյալին) անհապաղ հանձնելու պարտականությունը:

Օրենքի նախագծի վերնագրում «լրացում» բառն անհրաժեշտ է փոխարինել «փոփոխություն» բառով՝ հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներկայացված օրենքի նախագիծն ընդունելի կհամարի իր կողմից ներկայացված առաջարկության ընդունման դեպքում:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արսեն Մկրտչյանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն:**

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ օրենք) ընդունման արդյունքում շրջակա միջավայրի օբյեկտների՝ մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքի նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքի նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագիծը վերաբերում է *քրեական գործով վարույթը կասեցնելուց հետո քննիչի գործողությունների հստակեցմանը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) նախատեսվում է հստակեցնել քննիչի պարտականությունները՝ քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման բողոքարկման կարգի գործընթացում:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ, որի արդյունքում քննիչը կպարտավորվի տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը և միաժամանակ պարզաբանել քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման բողոքարկման կարգը:

Ելնելով վերոգրյալից գտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման ազդեցությունը ՀՀ պետական բյուջեի եկամուտների և ծախսերի վրա կլինի չեզոք:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-729-26.02.2015-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 1998 թվականի հուլիսի 1-ի քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«1.Քննիչը պարտավոր է տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին ուղարկել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշման պատճենը եւ միաժամանակ պարզաբանել քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման բողոքարկման կարգը»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի

«Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը պայմանավորված է տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների շահերը արդյունավետ պաշտպանելու անհրաժեշտությամբ:

Այսպես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի «այսուհետ՝ օրենսգիրք» 258-րդ հոդվածի 1-րդ մասի համաձայն՝ քննիչը պարտավոր է շահագրգիռ անձանց գրավոր տեղեկացնել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին եւ միաժամանակ պարզաբանել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով նախատեսված կարգով:

Նշված նորմերի մեկնաբանությունը («Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածով սահմանված նորմերի մեկնաբանման մեթոդով) թույլ է տալիս եզրակացնել, որ քննիչը զուտ տեղեկացնում է որոշման մասին: Այսինքն շահագրգիռ անձինք, տեղեկանալով կասեցված վարույթի մասին, չեն ստանում որոշման պատճենը, այլ ուղղակի վերջիններիս բացատրում են դրա բողոքարկման հնարավորության մասին:

Պրակտիկայում ընդունված է մի մոտեցում, որ քննիչների կողմից վերոնշյալ որոշումների միայն տեղեկացման եւ դրանց բողոքարկման կարգի պարզաբանման, ինչպես նաեւ արդյունքում փաստացի որոշման պատճենի չտրամադրման հիմնավորում է հանդիսանում այն, որ Օրենսգրքով նման դատավարական կարգ սահմնված չէ եւ ՀՀ Սահամնադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական եւ տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

Մինչդեռ, հարց է առաջանում, թե Օրենսգրքի վերոնշյալ հոդվածում նշված շահագրգիռ անձինք քննիչի կողմից քրեական գործով վարույթը կասեցնելու վերաբերյալ որ հիմքերը կարող են բողոքարկել համապատասխան մարմին, եթե քննիչն ընդամենը գրավոր տեղեկացնում է քրեական գործով վարույթը կասեցնելու մասին, չնշելով այդ որոշումը կայացնելու հիմքերը: Նշվածը ուղղակի հակասության մեջ է գտնվում Օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ մասի հետ, որի

համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված անձանց իրավունք է տրվում դատարան բողոքարկել նաեւ քրեական գործը կասեցնելու մասին որոշումը:

Իրականացնելով քննարկվող ինստիտուտի համեմատական վերլուծություն՝ Օրենսգրքի այլ դրույթների եւ կարգավորումների միջեւ, եւ համեմատելով խնդրո առարկա կարգավորումը մեկ այլ փուլի եւ գործողության հետ, մասնավորապես՝ քրեական գործով վարույթի կարճման հետ, որն ամրագրված է Օրենսգրքի 262-րդ հոդվածում, պարզ է դառնում, որ այնտեղ կարգավորումը ընթացել է այլ ուղով, մասնավորապես՝ տուժողին ուղարկվում է կարճման որոշման պատճեն, դրանով իսկ նախատեսելով բոլոր իրական հնարավորությունները նշված որոշումը բողոքարկելու համար:

Հարկավոր է հաշվի առնել, որ քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշումը ուղղակիորեն վերաբերում է տուժողի շահերին եւ հաշվի առնելով այն, որ անձանց արդյունավետ պաշտպանության իրավունքի իրականացման համար միջոցների նախատեսումն ու մատչելիության ապահովումը պետության պոզիտիվ պարտականությունն է, միայն տրամաբանական կլիներ, որ քննիչը տուժողին տրամադրեր քրեական գործով վարույթի կասեցման մասին որոշման պատճենը եւ պարզաբաներ, որ նշված որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված կարգով:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի միջամտությունից հետո՝ նկատի ունենալով, որ տուժողները, չստանալով որոշումները, փաստորեն զրկվում են դրանք բողոքարկելու, այդ կերպ իրենց շահերը արդյունավետ պաշտպանելու հնարավորությունից, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միասնական պրակտիկան ապահովելու նպատակով՝ ՀՀ գլխավոր դատախազը դեռեւս 2013 թվականի հուլիսի 17-ին հանձնարարել է կառուցվածքային եւ տարածքային ստորաբաժանումները ղեկավարող դատախազներին՝ ապահովել տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին քրեական գործով վարույթը կասեցնելու մասին գրավոր իրազեկումը, որում միաժամանակ պետք է պարզաբանվի, որ վերոնշյալ անձանց կողմից գրավոր պահանջի դեպքում նրանց կարող է տրամադրվել քրեական գործով վարույթը կասեցնելու մասին որոշումը՝ այն ՀՀ քրեական դատավարությանօրենսգրքով նախատեսված կարգով բողոքարկելու նպատակով:

Ճիշտ է հանձնարարականը ողջունելի է եւ իրականում լուրջ ձեռքբերում է իրավահարաբերության կարգավորման շրջանակներում, այնուամենայնիվ՝ անհրաժեշտ է, որ հարցը կարգավորվի օրենքով, քանի որ այն հավասարապես վերաբերվում էիրավունքին եւ պարտականությանը:

Հարկ է նշել, որ հարցի կարգավորումն իր արտացոլումն է գտել դեռեւս 2012 թվականից ՀՀ Ազգային ժողովում շրջանառության մեջ դրված «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի» նախագծում: